ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՋՐԱՌԱՏԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ

N 158
« 26 »Նոյեմբերի 2015թ.

Հայաստանի Հանրապետության
Արմավիրի մարզպետ
Պարոն Ա.Ղահրամանյանին

Հարգարժան մարզպետ

Կից ներկայացնում ենք Արմավիրի մարզի Ջրառատի գյուղապետարանի 2015 թվականի նոյեմբերի 26-ի ավագանու թիվ 10-րդ արտահերթ նիստի բյուջեի փոփոխությունները

Առդիր 44 էջ

Ջրառատ համայնքի ղեկավար Ս.Գալստյան

112,78/12536-15
«27» 11 2015

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՋՐԱՌԱՏԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

# ՈՐՈՇՈՒՄ 33-Ն

26 նոյեմբերի 2015թ — թիվ 10 արտ. Նիստի

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՋՐԱՌԱՏ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 26-Ի N 2- Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ:

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ կետով և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը.

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է[1]

1. Ջրառատի համայնքի ավագանու 2014 թվականի նոյեմբերի 26-ի «Բյուջեն հաստատելու մասին» թիվ 2-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխություն:

   1) Ջրառատի փոխադրամիջոցների 2015 թվականի տարեկան պլանը որը նախատեսված է 4996,0 հազար դրամ, պակասեցնել 1345,0 հազար դրամով թողնել 3651,0 հազար դրամ, հիմք ընդունելով Ջրառատի գյուղապետարանի փոխադրամիջոցների գույքահարկի բազան 20.11. 2015թվականի դրությամբ:

   Հետևաբար Ջրառատ համայնքի բյուջեի ծախսերը պակասեցնել 1345,0 հազար դրամ որից՝

   ա/Գործառնական դասակարգման 01 բաժնի 01 խմբի 01 դասի տնտեսագիտական դասակարգման 4212 հոդվածը պակասեցնել1000,0 հազար դրամ:

   բ/ Գործառնական դասակարգման 01 բաժին 01 խմբի 01 դասի տնտեսագիտական դասակարգման 4214 հոդվածից պակասեցնել 345,0 հազար դրամ:

2.. Սույն որոշումը ուժի մեջ է պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

| Ավագանու անդամներ | կողմ | դեմ | ձեռնպահ |
| --- | --- | --- | --- |
| Բարսեղյան Սարիբեկ | | | |
| Պողոսյան Արմեն | | | |
| Բաբուջյան Միհրան | | | |
| Խաչատրյան Հովհաննես | | | |
| Մելքոնյան Սերոբ | | | |
| Մելքոնյան Գևորգ | | | |

Ջրառատ համայնքի ղեկավար Ս. Գալստյան